

1122



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմոնյան  
«04» 02 2025թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 017 - 25

Նախաձեռնող՝

«Իշտիկունի Արևային» ՍՊԸ  
ք. Երևան, Գրիբոյեդով փ., 58 շ., 37 բն.

Գործունեությունը՝

Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն  
բնակավայրի Ավազի հանքի փողոց թիվ 4, 5, 6 հողամասեր  
հասցեներում 3000կՎտ դրվածքային հզորության արևային  
կայանի կառուցում  
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 017 - 25

« 04 » փետրվարի 2025թ.

«Իշտիկունի Արևային» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի Ավազի հանքի փողոց թիվ 4, 5, 6 հողամասեր հասցեներում 3000կՎտ դրվածքային հզորության արևային կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«Իշտիկունի Արևային» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն  
/«Բ» կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Գեղարքունիքի մարզ, Լճաշեն բնակավայր

**Ներածական մաս.** Կայանը տեղակայված է լինելու «Իշտիկունի Արևային» ՍՊԸ-ին պատկանող հողատարածքում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Լճաշեն բնակավայրի վարչական տարածքում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ) ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի: Արևային կայանի տեղաբաշխման վայրը որոշված է հողատարածքի սեփականատիրոջ որոշմամբ, հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները, տեղանքում առկա ենթակառուցվածքները, մասնավորապես հարևանությամբ գտնվող բարձր լարման էլեկտրական հաղորդալարերը: Նախագծված արևային ֆոտոէլեկտրական կայանը (ԱՖԵԿ) կառուցվելու է ՀՀ, Գեղարքունիքի մարզի, Սևան համայնքի Լճաշեն գյուղում: Տեղանքը գտնվում է հյուսիսային լայնության ծովի մակերևույթից 2040 մ բարձրության վրա: Տեղանքը Սևանա լճից 3500 մ, իսկ Լճաշեն գյուղից՝ 1350 մ հեռավորության վրա է: Ռելիեֆը հարթ է, տեղ-տեղ՝ բլրակային: Աշխարհագրական դիրքը և ծովի մակարդակից ունեցած բարձրությունը՝ 2040 մ իրենց ազդեցությունն են թողնում նաև տեղանքի քերմաստիճանային ռեժիմի վրա: Սևանա լճի ավազանի տարածքում տեղումները տատանվում են 388 մմ-ից (Օտվակ) մինչև 875 մմ-ի միջև (Եռաթմբեր): Տարվա ընթացքում տեղումների ամենաշատ քանակը դիտվում է գարնանը՝ մասնավորապես մայիս ամսին, իսկ ամենաքիչ տեղումները դիտվում են ձմռանը: Գարնանային տեղումները կազմում են ողջ տարեկան տեղումների 40-45%-ը, այն դեպքում երբ ձմռանը թափվող տեղումներին բաժին է ընկնում 10-





15%-ը: Նախատեսվող գործունեության տարածքը մոտակա բնակավայրերից՝ Լճաշեն բնակավայրից գտնվում է 1700 մ հեռավորության վրա, իսկ Սևանա լճից՝ 3500 մ: Գործունեության ենթակա տարածքում բացակայում են գրունտային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները, իսկ մոտակա մակերևութային ջրային ռեսուրսը Սևանի լիճն է, որը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 3500 մ հեռավորության վրա: Գործունեության ենթակա և հարակից տարածքներում չկան բնության, պատմամշակութային հուշարձաններ: Գործունեության տարածքին ամենամոտը գտնվում է բնության հատուկ պահպանվող տարածքը «Սևան» ԱՊ-ն՝ մոտ 3450 մ հեռավորության վրա: Մարզի տարածքով է անցնում Սոթք տանող երկաթգիծը, որի հեռավորությունը նախատեսվող գործունեության վայրից կազմում է մոտ 1200 մ: Հարակից տարածքները արոտավայրեր և գյուղատնտեսական մշակովի ցանքատարածություններ են, վերջիններս 25 տարի և ավելի չեն մշակվում, դրանք էրոզացված, գերարածեցված և բուսազրկված հողեր են: Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ վերջինից 500-650 մ երկարությամբ գրունտային ճանապարհով:

Սույն մասով նախատեսվում է իրականացնել Արևային էլեկտրակայանի էլեկտրատեխնիկական մասի նախագիծը: Նախագծում նախատեսվել են իրականացնել Փոխակերպիչ սարքերի տեղադրման, հաստատուն և փոփոխական հոսանքի մալուխների մոնտաժման աշխատանքները: Նախագծում ընտրվել են Sungrow 350HX ընկերության ինվերտորներ: Ինվերտորների տեխնիկական պարամետրերը ներառված են նախագծում: Ինվերտորները 330 կՎտ հզորության են, համապատասխանաբար 9 հատ քանակություններով: Ինվերտորները համալրված են իրարից անկախ 12 հատ մաքսիմալ հոսանքի հզորության կարգավորիչ բլոկներով, որոնցից յուրաքանչյուրին հնարավոր է միացնել 2 հատ հաստատուն հոսանքի շղթաներ : Արևային վահանների միջև կապն իրականացվում է 1x6 քմ կտրվածքի հաստատուն հոսանքի պղնձյա մալուխներով: Մալուխների միջև կապն իրականացվում է հատուկ MC4 կցորդիչների միջոցով, որոնցով կատարվում է նաև ինվերտորի հետ միացումը: Ինվերտորների ելքի փոփոխական հոսանքը նախատեսվում է հաղորդել ABBF-1.0 3\*240 քմ կտրվածքի մալուխներով, որոնք միանում են տրանսֆորմատորային ենթակայանի 0.8կՎ բաշխիչ կետում: Մալուխների ընտրությունն իրականացվել է ըստ հոսանքի թողունակության, և ստուգվել է հաշվի առնելով լարման անկման 7.5% և լարման կորստի + 5% թույլատրելի շեմը: Ուժային մալուխների մոնտաժային ուղեգծերը դեպի ուժային 35/0.8-0.8 կՎ տրանսֆորմատորային ենթակայան իրականացվում է ստորգետնյա տարբերակով: Համաձայն էԷՀ ՏԿ-ի IV գլխի 19.2 ենթակետում նշված պահանջների ստորգետնյա հատվածում մալուխագծի տեղադրման խորությունը 0.7 մ է: Նշված պահանջները կիրառվել են սույն նախագծում: Մալուխի կորի ներքին շառավիղը պետք է լինի ոչ պակաս, քան մալուխի տրամագծի 15-պատիկը: Մալուխի համար՝ խրամուղում, նախատեսված է ավազե անկողնու պատրաստում՝ ավազի 100 մմ շերտի վրա փռվում է մալուխը, նորից ծածկվում է 150 մմ ավազի շերտով: Արևային կայանի անվտանգության համար նախագծում նախատեսվում է իրականացնել տարածքի լուսավորության և տեսանկարահանող սարքերով հսկողության իրականացում: Լուսավորությունն իրականացվում է 50 Վտ լեդ լուսատուներով, որոնք մոնտաժվում են մետաղական ցանկապատի վրա նոր տեղադրվող Ø49 մմ տրամագծով հենարանի վրա: Լեդ լուսատուները տեղադրվում են 50 մ քայլով: Նախագծում նախատեսվում է նաև տեղադրել անվտանգության տեսանկարահանող սարքեր: Տեսախցիկները նախատեսվում են մոնտաժել ցանկապատի վրա տեղադրվող Ø49 մմ մետաղական խողովակին: Արևային կայանի արևային վահանակների մոնտաժման համար նախատեսվում է





տեղադրել մետաղական կարկասից պատրաստված լրակազմ խմբեր: Ընդհանուր թվով նախատեսվում է տեղադրել 181 հատ 28 վահանակով և 20 հատ 42 վահանակով մետաղական կարկասի խմբեր: Մետաղական կարկասը մոնտաժվում է նոր տեղադրվող բետոնե սյունային տիպի հիմքերի վրա: Յուրաքանչյուր խմբում առկա են 10 հատ և 14 հատ բետոնե սյունային հիմքեր: Բետոնե հիմքերի համար նախատեսվում է հորատել 1.1 մ խորության  $\varnothing 300$  մմ տրամագծով փոսորակներ՝ ընդհանուր թվով 2090 հատ: IV կարգի բնահողի հորատելուց հետո նախատեսվում է փոսորակում լցնել 100 մմ խճային շերտ, այնուհետև, մետաղական սյան(PS 1) տեղադրելուց հետո, անհրաժեշտ է լցնել B15 դասի բետոն: Նախատեսվում է բետոնի հիմքը գետնից բարձրացնել 200 մմ: Բետոնե հիմքերի բաց մասերում նախատեսվում է իրականացնել հիդրոմեկուսացում 2 տակ շերտով: 1 խմբում առկա հետևի և դիմացի բետոնային հիմքերի ուղղաձիգ՝ միջանկյալ հեռավորությունը 2030 մմ է: Հետևի և դիմացի ոտքերի հորիզոնական ուղեգծում միմյանց նկատմամբ միջակայքը 3600 մմ է: Մետաղական կարկասը բաղկացած է տարրատեսակ հանգույցներից: Մետաղական կարկասի դիմացի ոտքի սյան բարձրությունը՝ հաշված բետոնային հիմքից 1300 մմ է(PL-1), իսկ հետևի ոտքի սյան բարձրությունը՝ 2255 մմ(PL-2): Հետևի սյան և դիմացի սյան միջև տեղադրվում է ամրակցող կապ(Sp-1) և մետաղական պրոֆիլ (Dg-1) վահանակների ձգման համար: Մետաղական կարկասի դիմացի, իսնչպես նաև հետևի ոտքերի սյունները հորիզոնականով միմյանց կապակցվում են Mb-1, Mb-2, Mb-3 մետաղական պրոֆիլներով: Լրացուցիչ ամրակցման համար հետևի 1-2 և 4-5 ոտքերի սյունները միմյանց ամրակցվում են Bs-1 մետաղական կապով: Ինվերտորների և փոփոխական հոսանքի ավտոմատ անջատիչի մոնտաժման համար մետաղական կարկասի 2-րդ ոտքի սյան և նոր տեղադրվող PI-3i(ինվերտորի սյան) սյան միջև մոնտաժվում են RL-1 հորիզոնական մետաղական պրոֆիլներ: Արևային կայանի գերլարումների պաշտպանության և հոսանքատար մասերի պաշտպանության համար իրականացվում է հողանցման աշխատանքներ: Հողանցման համակարգը բաղկացած են 68 հատ L=2000 մ 50x50x5 մ ուղղահայաց տեղադրվող անկյունակներով, որոնք իրար կապակցվում են 40x4 մմ հողանցման շերտապողպատով: Հուսալի հողանցման համակարգ ստանալու համար նախատեսվում է արևային կայանի յուրաքանչյուր արևային վահանակների շարքում տեղ գտած խմբերը, ինչպես նաև բոլոր շարքերը միմյանց կապել հողանցման շերտապողպատով: Մետաղական ցանկապատն իրականացվում է 2.5մ քայլով  $\varnothing 49 \times 2$  մմ 3 մ չափով մետաղական խողովակների տեղադրումով: Ցանկապատի ընդհանուր երկարությունը կազմում է 1295 մ: Ցանկապատի բարձրությունը 2 մ է: Լուսավորության և անվտանգության տեսախցիկների մոնտաժման համար յուրաքանչյուր 13-րդ սյան համար նախատեսվել է տեղադրել  $\varnothing 49 \times 2$  մմ՝ 4 մ երկարության Խողովակ: Մետաղական խողովակները տեղադրվում են բետոնե հիմքերի մեջ: Բետոնե հիմքերի համար նախատեսվում է հորատել 1.0մ խորության  $\varnothing 200$  մմ տրամագծով փոսորակներ՝ ընդհանուր թվով 652 հատ: IV կարգի բնահողի հորատելուց հետո նախատեսվում է փոսորակում լցնել 200 մմ խճային շերտ, այնուհետև, մետաղական խողովակի տեղադրելուց հետո, անհրաժեշտ է լցնել B15 դասի բետոն: Նախատեսվում է բետոնի հիմքը գետնից բարձրացնել 100 մմ: Բետոնե հիմքերի բաց մասերում նախատեսվում է իրականացնել հիդրոմեկուսացում 2 տակ շերտով: Մետաղական խողովակների տեղադրումից հետո նախատեսվում է մոնտաժել մետաղական 3D ցանկապատը: Ցանկապատները միաձև 2.5 մ երկարության են, որոնք միմյանց մոնտաժվում են ամրակցիչներով: Ամրակցիչները ձգվում են մետաղական խողովակների:

Նախագծի սույն հատորում նախատեսվում է իրականացնել 4448 կՎԱ հզորությամբ և 35 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի տեղադրման աշխատանքներ:





Տրանսֆորմատորային ենթակայանը բաղկացած է 1 ամբողջական կոնտեյներից, այսինքն՝ ամբողջական հավաքածուի տեսակից: Այն բաղկացած է 35 Վ լարման մասից, տրանսֆորմատորային մասից և 0.8 կՎ լարման անջատիչներից: Տրանսֆորմատորային ենթակայանի չափերն են՝ 6058x2896x2438 մմ: Այն տեղադրված է հատուկ նախագծված բետոնե հարթակի վրա: Տրանսֆորմատորային ենթակայանից յուրի արտանետման յուրի հավաքման կետը և յուրի կուտակիչի հորը նախատեսված են նախագծով: Յուրահավաքը պետք է կառուցված լինի երկաթբետոնե նյութից՝ 1° թեքության անկյան տակ: Յուրի կուտակիչի հորի չափսերն են 2970x2500x1200 մմ, հաշվի է առնվել տրանսֆորմատորային յուրի ծավալի ընտրությունը: Յուրի պահեստավորման բաքը պետք է կառուցված լինի բետոնե պատերից՝ ներսում մետաղական ցանցով: Յուրի պահեստավորման հորի բոլոր պատերի, առաստաղների և հատակի մետաղական ցանցը պետք է կրկնապատկվի:

Նոր կառուցվող 3000կՎտ դրվածքային հզորությամբ 35/0.8-0.8 կՎ ԵԿ-ի էլեկտրամատակարարումը նախատեսված է նախատեսված է 35կՎ ՕԳ-ից՝ երկու ճյուղավորմամբ: Ճյուղավորումներն իրականացվում են ՕԳ-ի N8 և N10 հենարաններից՝ մալուխագծերով, այնուհետև կառուցվում է երկշղթա օդային գիծ՝ մինչև ենթակայանի մոտակայքը, որտեղ ՕԳ-ից նորից անցում է կատարվում մալուխագծերի: Մինչև ԵԿ կառուցվում է ստորգետնյա մալուխագիծ:

Արևային կայանի արտադրած էլեկտրաէներգիայի հաղորդաբաշխման համար կառուցվում է 35 կՎ օդային գիծ և 35 կՎ տրանսֆորմատորային ենթակայան(ԵԿ): Օդային գծի հենասյուրիների հիմքերի տեղակայումից գոյանում է 2007 խմ ծավալով բնահող: Նախատեսվում է փոսորակում տեղադրել պատրաստի ե/բ հիմքեր, որից հետո կատարվում է քանդված բնահողի հետլիցք 1891 խմ ծավալով: Ավելացված գրունտները փոխվում են տեղում: 35կՎ ԵԿ-ի շինարարական աշխատանքները բաժանվում են՝ 35կՎ լրակազմ ենթակայանի տեղադրում, Յուրահավաք բաքի կառուցում: Տրանսֆորմատորային ենթակայանի համար նախատեսվում է կառուցել յուրահավաք: Յուրահավաքի համար նախատեսվում է քանդել 10,2խմ ծավալով բնահող: Հանված գրունտը իրականացվում է տեղում հետլիցք և հարթեցում: Կայանի տեղակայման աշխատանքները տևելու են 730 օր՝ ըստ ժամանակացույցի:

**Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝**

արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Զրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին, գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կկատարվի փակ ծածկ ունեցող մեքենաներով, իսկ նյութերը տեղափոխող մեքենաները կփակվեն անջրթափանց թաղանթով, տարածքում նյութերը կպահվեն ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ, շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն կօգտագործվեն միայն սարքին վիճակում, պարբերաբար կիրականացվեն ստուգումներ: Իշտիկունի արևային կայանի տարածքում առկա են լեռնային մամռակալած քարերի կույտերի զանգվածներ: Տեղանքն աչքի է ընկնում բարձր լեռնային պայմաններին բնորոշ բուսականությամբ: Տեղանքում գրեթե կանաչ բուսածածկույթի առկայություն չկա: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է քարակույտերի ամբողջական մաքրում: Կատարվելու է հողային շերտի հարթեցման աշխատանքներ: Հողային





շերտի հարթեցումից գոյացած գրունտը օգտագործվելու է մակերևույթում առկա փոսորակների և խիստ գոգավորությունների հարթեցման համար: Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն, արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կկուտակվի տարածքում՝ ծածկվելով անջրթափանց թաղանթով, օդային գծի անցկացման աշխատանքների ժամանակ հանվող հողային զանգվածը կկուտակվի անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ ծածկված վիճակում, հողային զանգվածն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար, ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կկատարվի այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր, շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները, շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կկայանել գրունտային ճանապարհի վրա, շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կկատարվի գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում: Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շերով), ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով՝ մոտակա Սևան համայնքից, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը, ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության, պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած արտադրական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարան, շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում, շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախառնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի : Կեղտաջրեր. Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջրերի հեռացման համար կտեղադրվի սեպտիկ հոր: Մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել համապատասխան գերատեսչություններին, «Սևան»ԱՊ-ին, գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,





բուսատեսակների կենսունակության ապահովման նպատակով դրանք տեղափոխել և վերատնկել հատուկ պահպանման գոտում, - շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար: Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է ՕԳ-ի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով, հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով: Թափոններ Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է ՕԳ-ի կառուցման տարածքում խուսափել վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից, նյութերի մնացորդները (մետաղական մասեր, մետաղալարեր, ներկեր և այլն) Կապալառու կազմակերպության կողմից հավաքել հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո տեղափոխել, անհրաժեշտության դեպքում հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, հետագա վերամշակման և օգտագործման համար, դրանց -շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնի մնացորդներ, կհավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, կենցաղային աղբը հավաքել պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխել աղբավայր՝ համայնքապետարանի համաձայնությամբ, շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասագերծում կատարող կազմակերպություններին կամ խառնել կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխել աղբավայր:

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող գործընթաց է, գործընթացում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմմանն ուղղված: Այդ նպատակով նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն, համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում, բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով, աշխատողների իրազեկում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին, անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով մշտական մոնիթորինգի իրականացում՝ 2 աշխատողի միջոցով, տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել՝ նկատած անհամապատասխանությունները, շինարարական և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանում, շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումների իրականացում՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով, շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարել շինորպարակից դուրս՝ մասնագիտացված






լցակայաններում կամ սպասարկման կետերում, շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում, բարեկարգման աշխատանքների իրականացման ապահովում: Արևային կայանի կառուցման համար նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը ներառված են կայանի շինարարության և շահագործման ծախսերում: Նախատեսվում է բնապահպանական միջոցառումների կիրառման և մոնիթորինգի իրականացման համար տրամադրել տարեկան 200 000 դրամ:

**Պատճառաբանական մաս.** Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային լուծումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

1. Անհարժեշտ է շինարարության և շահագործման փուլերում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
2. Ազդակիր բնակավայրում ապահովել նախատեսվող սոցիալական ծրագրերի իրականացումը: Մինչ նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացումը՝ անցկացվող մալուխագծերի ճանապարհի հետ հատման լուծումները համաձայնեցնել համապատասխան կառույցների կամ մարմինների հետ:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված: Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
4. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված ՀՀ-ում գործող սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարումը:






5. Ապահովել և պահպանել բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը, բնապահպանական պահանջների կատարումը:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ


«Իշտիկունի Արևային» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի Ավազի հանքի փողոց թիվ 4, 5, 6 հողամասեր հասցեներում 3000կՎտ դրվածքային հզորության արևային կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Շարիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Վարդան Հարությունյան